## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 27 Փետ. Կիր. — Տեառնընդառաջ. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և ներկայ գտնուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագին որ մատուցուեցաւ Աւագ Սեղանի վրայ. ժամարարն էր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան։ Ս. Պատրիարք Հայրը քարոզեց բնաբան ունենալով «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց և փառք ժողովրդեան քում Իսրայէլի»։

● 2 Մարտ Դշ. — Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին և նախագահեց վաղուան տօնի նախատօնակին։

● 3 Մարտ Եշ. — Տօն Ս. Վարդանանց զօրավարաց. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին. ժամարարն ու քարոզիչն էր Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան։ Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն։

● 4 Մարտ Ուր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորւոց Ս. Մարկոս Եկեղեցւոյն մէջ. ժամարարն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան, որ նաև քարոզեց վեր հանելով Ասորւոց Ս. Մարկոս Եկեղեցւոյն Ս. Գրական և պատմական արժէքները, պանծացնելով նոյն ատեն մեր հայրերու յիշատակը որոնց զոհողութեան ու բարեպաշտութեան գինն է տարեկան պատարագի մեր իրաւունքը, հնօրեայ այս սրբատեղւոյն մէջ։

● 5 Մարտ Շբ. — Տօն Կոստանդնուպոլսոյ Ս. Ժողովոյն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին և նախագահեց Մանկունքի արարողութեան։ Ներկայ եղաւ նոյնպէս երեկոյեան պաշտամունքին և նախագահեց Ս. Սեղաններու վարագուրման, ձեռամբ հոգեշնորհ հայրերու։

● 6 Մարտ Կիր. — Բուն Բարեկենդան. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին և գոց պատարագին. ժամարարն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։ Դպրապետի պաշտօնը վարեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։

● 7 Մարտ Բշ. — Ա. օր Մեծ պահոց. առաւօտեան պաշտամունքէն վերջ Միաբանութիւնը պատրիարքարան եկաւ և Մեծ պահոց շնորհաւորութիւնը մատոյց Ս. Պատրիարք Հօր, որ իր կողմէ փոխադարձ շնորհաւորութիւններով օրհնեց բոլորին ուսուր պատշաճի խրատականով։

● 12 Մարտ Շբ. — Յետ-միջօրէի ժամը 2.30ին Ս. Պատրիարք Հայրը ի գլուխ Հոգ. Միաբան Հայրերու Ս. Յարութիւն գնաց և «Հրաշափառով մուտք գործեց տաճար. Ս. Գերեզմանի ուխտի արարողութենէն յետոյ բարձրացաւ մեր Գողգոթայի մատուռը ուր նախագահեց երեկոյեան պաշտամունքին։

● 13 Մարտ Կիր. — Բ. Քառասնորդաց, Արտաքսման. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին ի Ս. Յարութիւն մեր Գողգոթայի մատրան մէջ. ժամարարն էր Հոգ. Տ. Յարութիւն Արքեպս. Մուշեան. ապա նախագահեց մեծահանդէս թափօրին որ տեղի ունեցաւ Ս. Գերեզմանին շուրջ, ու վերադարձաւ պատրիարքարան պաշտօնական փնացքով։

● 17 Մարտ Եշ. — Ս. Պատրիարք Հայրը նախագահեց երեկոյեան «Հսկում»ին և քարոզեց։

● 19 Մարտ Շբ. — Տօն Ս. Կիւրղի Երուսաղիմայ հայրապետին. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին, նախագահեց Մանկունքի արարողութեան, և ներկայ եղաւ Ս. Պատարագին՝ որ մատուցուեցաւ Ս. Կիւրղի Սեղանին վրայ. ժամարարն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան։ Զկնի Ս. Պատարագի Միաբանութիւնը պատրիարքարան եկաւ և շնորհաւորեցին Անուան. Ս. Պատրիարք Հօր անուան տօնը. իսկ յետ-միջօրէի վանքաբնակ և դուրսը բնակող ամբողջ ժողովուրդը շնորհաւորութեան եկան։

● 20 Մարտ Կիր. — Գ. Քառասնորդաց, Անառակին. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլխադիր. ժամարարն էր Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան. Քարոզեց Ս. Պատրիարք Հայրը, բնաբան ունենալով Անառակի առակը։

● 27 Մարտ Կիր. — Դ. Քառասնորդաց, Տնտեսին. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. ժամարարն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան. Քարոզեց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան, բնաբան ունենալով «Ոչ կարէք Աստուծոյ ծառայել և Մամոնայի»։ Ուստի, եղբայրակցուց, հարկ է ընտրութիւն մը կատարել այս երկուքին միջև, որովհետև միջին ճամբայ չկայ։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.